



30 հունիսի 2009 թ.

Առաջարկություններ ու դիտողություններ

ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ արդարադատության նախարարության փորձագետների կողմից մշակված Տեղեկատվության ազատության ոլորտի օրենսդրական փաթեթի նախագծի վերաբերյալ

Մամուլի աջակցության «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» հասարակական կազմակերպության Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության Կենտրոնը ողջունում է նման նախաձեռնությունը և ընդհանուր առմամբ դրական է համարում նախագծի առաջին խմբագրությունը՝ միտված բարեփոխելու Տեղեկատվության ազատությանը վերաբերող օրենսդրությունը: Կարծում ենք, որ, իրոք, տվյալ ոլորտը կարիք ունի համապատասխանեցման այժմյա իրականությանը: Այդ նպատակով, ցանկանում ենք Ձեր ուշադրությանը ներկայացնել Կենտրոնի առաջարկություններն ու դիտողությունները հնարավորինս կատարելագործելու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Նախագիծ):

I. Նախագծի համապատասխան հոդվածների նոր խմբագրություն

1. Առաջարկում ենք վերախմբագրել Նախագծի 3-րդ հոդվածի երրորդ պարբերությունը («տեղեկություն» սահմանումը) հետևյալ կերպ՝

«տեղեկություն՝ տեղեկատվություն տնօրինողի կողմից ցանկացած ձևով առկա կամ ստացված և տնօրինվող ցանկացած տեղեկություն և/կամ տվյալ:

Հիմնավորում

Այսպիսով չի սահմանափակվում տեղեկատվության ամրագրված լինելը որևէ կրիչի վրա, տեղեկատվության կարգավիճակը և նվազեցնում է տեղեկությունը մերժելու հնարավոր հիմքերը: Անցկացված հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ 26 եվրոպական երկրներից 21-ում տեղեկատվության ազատությունը առնչվում է տեղեկատվությանը, այլ ոչ թե միայն պաշտոնական փաստաթղթերին:

2. Նախագծի 3-րդ հոդվածի չորրորդ պարբերությունը (**«տեղեկատվություն տնօրինող»** սահմանումը), «հանրային նշանակության կազմակերպություններ» ձևակերպումից առաջ լրացնել. «պետության կողմից ֆինանսավորվող կամ նյութական այլ աջակցություն ստացող կազմակերպություններ» բառակապակցությունը.

Հիմնավորում

Այս առաջարկը ուղղված է ապահովելու հարկատուների միջոցների օգտագործման գործընթացի և կառավարության աշխատանքի առավել թափանցիկությանը, հանրային վերահսկողության հնարավորությանը, բարձրացնելու հանրության տեղեկացվածությունը և իրազեկությունը: Բացի այդ, նման ընկերություններից ստացված տեղեկությունները, որպես հետևանք կնպաստեն պետական արդյունավետ կառավարմանը և կնվազեցնեն կոռուպցիոն ռիսկերը: Հատկանշենք, որ նման քաղաքականություն որդեգրվել է շատ երկրներում, ինչպիսիք են՝ Ֆինլանդիան, Շվեդիան, Լիխտենշտեյնը, Ավստրիան, Չեխիան, Սլովակիան, Սլովենիան, Իսրայելը, Բուլղարիան, Մեծ Բրիտանիան, Նոր Զելանդիան, Լեհաստանը, Խորվաթիան, Ֆինլանդիան, Բոսնիա և Հերցեգովինան, Էստոնիան և այլն: Թվարկված երկրներից մի մասը, ի դեպ, որպես «տեղեկատվություն տնօրինող» նախատեսում են այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են պետպատվեր, հանդիսանում են պետության կապալառու, հանրային նշանակության ծառայություններ են մատուցում կամ աշխատանքներ կատարում, ինչպես նաև օժտված են իրականացնելու հանրային գործառույթներ:

3. Լրացնել Նախագծի 4-րդ հոդվածը հետևյալ բովանդակությամբ նոր կետով, շարադրելով այն որպես հոդվածի 2-րդ մաս, իսկ 2,3,4-րդ մասերը համապատասխանաբար փոխարինել 3,4,5-րդ մասերի.

«Տեղեկատվություն տնօրինողի մոտ առկա բոլոր տեղեկությունները, սկզբունքորեն հրապարակային են և կարող են չտրամադրվել միայն այլ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով.»

4. Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ նախատեսված էլեկտրոնային հարցումը չսահմանափակել միայն էլեկտրոնային փոստով, այլ լրացնել.

«ինչպես նաև էլեկտրոնային կապ հաստատող այլ միջոցներով, որոնք հասանելի են տեղեկատվություն տնօրինողի համար»:

Հիմնավորում

Կարծում ենք, որ նախագծի խմբագրությունում պետք է հաշվի առնել Հայաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում վերջերս կատարված նորամուծությունները և հետագա ծրագրերը, մասնավորապես էլեկտրոնային կառավարման մաս կազմող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման փաստը: Վերջինս, կարծում ենք, ընդհանուր առմամբ նոր պատճառ կհանդիսանա կրկին վերանայելու Օրենքի այս նախագիծը:

5. Նախագծի 8-րդ հոդվածից, մեր կարծիքով, պետք է հանել դիմումատուի ինքնության հաստատման առնչվող (անուն-ազգանուն, հատկապես ստորագրություն) տվյալների պարտադիր պահանջը, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվող տեղեկությունն առնչվում է անհատական կամ օրենսդրությամբ սահմանված խորհրդապահական տեղեկատվությունների:

Հիմնավորում

Շվեդիայի, Նորվեգիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ որոշ նահանգների և Մեքսիկայի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ երկրներում տեղեկություն տրամադրելու դիմումում բացակայում է ստորագրության պարտադիր առկայության պահանջը: Այնուամենայնիվ, դա արգելք չէ դիմումատուների համար այն նշելու համար: Տեսականորեն, հնարավոր է գրավոր դիմումը սկան (scan) անել և մուտքագրելով համակարգիչ, այնուհետ կցել նամակին և ուղարկել տեղեկատվություն տնօրինողին: Սակայն այս տարբերակը չափազանց անհարմար է, եթե ոչ անիրատեսական, քանի որ պահանջում է լրացուցիչ սարքավորում (scanner) և առնվազն միջին համակարգչային գիտելիքներ, որը Հայաստանի դեպքում միանշանակ լուրջ խոչընդոտ է հանդիսանում:

Օտարերկրյա պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն հասցեի կամ էլ փոստի նշումով անանուն հարցումների հնարավորությունը բխում է պետական և հասարակական շահերից: Հայտնի է, որ քաղաքացիական ծառայողները տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը կիրառելով՝ անանուն հարցումների միջոցով պահանջում են հատուկ փաստաթղթեր, որոնք և բացահայտում են իրենց գործընկերների կամ վերադասության կոռուպցիայում ընդգրկված լինելու փաստը և այնուհետ փոխանցում դրանք հակակոռուպցիոն մարմիններին: Ավելին, անանուն հարցումները կանխարգելում են պետական մարմինների հնարավորությունը՝ խտրականություն կիրառելու «անցանկալի» անձանց կողմից կատարված հարցումների նկատմամբ, այդպիսով ամրապնդելով տեղեկատվության հասանելիության ռեժիմը:

Մինևույն ժամանակ, գտնում ենք, որ Հայաստանում դեռևս անիրատեսական է հանրության լայն շերտի կողմից տեղեկատվություն տնօրինողներին էլեկտրոնային տեղեկատվություն հարցումներ հղելու հնարավորությունը, քանի դեռ էլ-ստորագրությունը շատերի համար հասանելի չէ:

Բացի դա, տեղեկացված լինելով, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է միանալ 2008թ-ի նոյեմբերի 27-ին ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին» կոնվենցիային, գտնում ենք, որ պետք է հաշվի առնել նաև Կոնվենցիայի համապատասխան դրույթները, տվյալ դեպքում՝ 4-րդ հոդվածի 2-րդ կետը:

Մասնավորապես, Կոնվենցիան Կողմերին չի պահանջում դիմումատուների իրավունք վերապահել կատարելու անանուն հարցումներ, սակայն խրախուսում է դա պարտադիր բնույթ չկրող պարտավորության ներառմամբ: Այն պետություններում, որտեղ նման իրավունքը գործում է, ենթադրվում է, որ անհրաժեշտություն չկա պահանջելու դիմումատուի ինքնությունը, երբ միաժամանակ պարտադիր չէ, որ դիմումատուն պատճառաբանի հարցումը:

6. Բոլոր դիմումատուներին/հարցում կատարողներին, անկախ հարցման տեսակից, պետք է տրամադրվի հարցումը ստանալու ստացական, որտեղ պետք է նշված լինի մուտքագրման համարը, գրավոր հարցման դեպքում՝ հարցումն ընդունողի անուն և ազգանունը, մուտքագրման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը:
7. Նախագծի 8-րդ հոդվածի 12-րդ կետի «գրավոր» բառից հետո պետք է լրացնել «կամ էլեկտրոնային» բառը:

Հիմնավորում

Պետք չէ բացառել էլեկտրոնային հարցման հնարավորությունը, հակառակ դեպքում, էլեկտրոնային տարբերակով հարցում կատարողների իրավունքները կխախտվեն:

II. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք

Տեղեկության տրամադրման դիմաց Օրենքով նախատեսված վճարները պետք է հաշվարկվեն ոչ թե ֆիկսված գներով այլ պետական գնումների ներկայացրած հաշիվների հիման վրա: Այսինքն, կրիչների գինը պետք է որոշվի պետգնումների կողմից նշված շուկայական գների հիման վրա:

Հիմնավորում

Օրենքով գների ֆիկսումը խոչընդոտում է հետագայում դրանք իրական շուկայական գներին համապատասխանեցնելը, իսկ առաջարկվող տարբերակի դեպքում, այն շատ ճկուն է կիրառելիության մեջ և արագ կարող է արձագանքել շուկայում կատարվող յուրաքանչյուր փոփոխություններին: Ավելին, առաջարկվող տարբերակը կխթանի գների համապատասխանեցմանը նույնիսկ դրամի փոխարժեքի տատանումների պարագայում:

Եզրափակելով, հույս ենք հայտնում, որ մեր համագործակցությունը շարունակական կլինի, ինչպես նաև հայտնում ենք մեր պատրաստակամությունը մասնակցել աշխատանքային խմբի հետագա քննարկումներին:

Հարգանքով,

«Ինտերնյուս» ՀԳ-ի

**Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության
կենտրոնի իրավախորհրդատու՝**

Մովսես Հակոբյան